ՄԻԱՑՅԱԼ ԱՍՏՎԱԾԱՇՆՉԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ԿԱՆԱԴԱՅՈՒՄ

Սույն թվականի սեպտեմբերի 26-ից հոկտեմբերի 3-ը Կանադայի Օնտարիո Նահանգի Միսիսոկա քաղաքում տեղի ունեցավ Միացյալ Աստվածաշնչային Ընկերության համագումարը: Համագումարի առաջնորդող թեման էր սուրբ գրային "Բանիս Աստծոյ կեանք ամենեցուն" խոսքը: Համագումարը նաև կարևոր մի առիթ եղավ նշելու Միացյալ Աստվածաշնչային Ընկերության հիմնադրության հիսնամյակը՝ իբրև համաշխարհային Աստվածաշնչային եղբայրակցություն: Այսօր ՄԱԸ-ն մի կազմակերպություն է, որը գործում է աշխարհի ավելի քան 200 երկրներում: Համագումարի օրերին Միսիսոկայում մասնակիցները լսեցին Աստվածաշնչի պատգամը, անդրադարձան դրա կարևորությանը մեր առօրյա կյանքում, փոխառությանց փոխանակման միջոցով իրար ավելի լավ ճանաչեցին և Աստծու ծառայության գործի զորացման համար խորհուրդներ փոխանակեցին: Համագումարի օրերին, երրորդ հազարամյակի նախօրեին, նոր ծրագրեր կազմվեցին: Դրանցում մեծ տեղ հատկացվեց տեսա-լսողական միջոցների կիրառման անհրաժեշտությանը նոր սերնդի հոգևոր դաստիարակության գործում:

Համագումարի օրերին հատուկ բանախոսություններ լսվեցին, եղան հատուկ աստվածաշնչային մեկնաբանություններ, որոնցով հանդես եկան Աստվածաշնչի մասնագետ ուսումնասիրողներ՝ պրոֆ. Մոլզես Սիլվային, պրոֆ. Լամին Սաննային, դոկտ. Մելբա Մագգային, մոնսենյոր Արմանդո Լևորատտոն, Հոգեշնորհ Օլե Գվարմեն: Բոլոր մասնակիցների համար տեղի ունեցավ հատուկ համաժողով "Կնոջ դերը Աստվածաշնչային Ընկերությունների մեջ" թեմայով, ուր ելույթներ ունեցան դոկտ. Մուզիմբի Կանյորոն, օրդ. Ռանժինի Ռեբերան և օրդ. Վենդի Ռոբինզը:

Համագումարի ընթացքում տեղի ունեցան հանձնախմբերի ժողովներ: Դրա նպատակն էր՝ ի մի բերել յուրաքանչյուր շրջանի յուրահատկությունները, պահանջները ու այնտեղ գործելու եղանակները:

Միսիսոկա քաղաքի եկեղեցում տեղի ունեցավ համագումարի բացման արարողությունն ու հանդեսը, ինչպես նաև ընկերության հիսնամյա հոբելյանի հանդիսությունը:

Երրորդ հազարամյակի նոր ծրագրերի և աշխատանքային ձևի մասին հատուկ բանախոսության էր հրավիրված դոկտ. Ֆիլիպ Սթինը, որը խոսեց "Աստվածաշնչային Ընկերությունները երրորդ հազարամյակի նախաշեմին և ակնարկ դեպի գալիքը" թեմայով:

Համագումարի օրերին մասնակիցները այցելեցին Միսիսոկայի շրջանի եկեղեցիները, այնտեղ ծանոթացան եկեղեցու անդամների և ժողովրդի հետ: Նրանք քարոզներ խոսեցին և ավելի սերտացրին կապը ժողովրդի և Աստվածաշնչային Ընկերությանների միջև:

Համագումարի ընթացքում խոսվեց նաև այն տնտեսական դժվարության մասին, որ այսօր դիմագրավում են գրեթե բոլոր բարեգործական, շահ չակնկալող ընկերությունները: Այդ թվում նաև Միացյալ Աստվածաշնչային Ընկերությունը: Որոշվեց գործունեության նոր ոլորտներ գտնել Աստվածաշնչային Ընկերությունների ապագան ամուր և ապահով դարձնելու համար:

Սույն Համագումարը հրավիրել էր Կանադայի Աստվածաշնչային Ընկերությունը, նախագահն էր Գերաշնորհ Ջոն Սպեռին: Համագումարի բոլոր պատգամավորները մասնակցեցին Կանադային նվիրված երեկոյին, որն անցկացվեց տեղի Աստվածաշնչային Ընկերության կողմից:

Համագումարին, հանում Հայաստանի Աստվածաշնչային Ընկերության, մասնակցեց Հոգաբարձուների Խորհրդի նախագահ Գերաշնորհ Տ. Ներսես Արքեպիսկոպոս Պոզապալյանը: Սրբազան Հայրը սեպտեմբերի 29-ին, կիրակի օրը, ընդառաջելով Հայ Առաքելական Եկեղեցու Կանադայի Թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Հովնան Արքեպիսկոպոս Տերտերյանի հրավերին, Ս. Պատարագ մատուցեց Տորոնտո քաղաքի Ս. Երրորդություն հայոց եկեղեցում, բանին կենաց քարոզությամբ մխիթարեց հավատացյալներին և Հայոց Հայրապետի՝ Գարեգին Ա. Կաթողիկոսի հայրական ողջույնն ու Հայրապետական օրհնությունները փոխանցեց նրանց և լուրեր տվեց Ս. Էջմիածնից ու Հայաստան աշխարհից:

ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈԶԱՊԱԼՅԱՆ